

Տաքակի ՄովսեսՅան
Երևանի պետական համալսարան

**ՈՒՂՂԱՋԻԳ ՀԱՍՏԵՔՍԸ ՈՐՊԵՍ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱ**

Հոդվածում դիտարկվում է «ուղղաձիգ համատեքստ» լեզվաբանական խնդրի պատմությունը՝ հենվելով տարրեր սերունդների և դպրոցների լեզվաբանների աշխատությունների վրա: Ներկայացվում են նաև խոսրի պատկերապերնան անդրադարձ (allusive) հնարների մի շարք դասակարգումներ, ինչպես նաև մեջբերումների հիմնական աղյուրները: Հոդվածում փորձ է արվում նաև համադրել ուսական և հայկական լեզվաբանական դպրոցների ներկայացուցիչների եզրահանգումներն ու համապատասխան տերմինարանությունը արևմտյան դպրոցների գիտնականների եզրահանգումների և տերմինարանության հետ:

Բանակի բառեր. ուղղաձիգ համատեքստ, հորիզոնական համատեքստ, գրական անդրադարձ, մեջբերում, լեզվաբարտահայտչական հնար

«Ուղղաձիգ համատեքստը գրական ստեղծագործության մեջ տեղ գտած պատմաբանասիրական բնույթի տեղեկությունն է», իսկ ցանկացած տեսքի հասկացման համար ընթերցողից պահանջվում է նախազիտելիք ուղղաձիգ համատեքստի վերհաննան համար /Ախմանովա, 1977: 47/:

Սոհասարակ «ուղղաձիգ համատեքստ» եզրը ներմուծվել է 20-րդ դարի երկրորդ կեսին ուսու լեզվաբաններ O. Ախմանովայի և Ի. Գյուրբենետի կողմից: Տեքստում ուղղաձիգ համատեքստի ներդրման միջոցներով պայմանավորված տարբերակում են բանասիրական (գրական անդրադարձներ, մեջբերումներ, այլակերպված դեֆորմացված, դարձվածքներ) և սոցիալ-պատմական ուղղաձիգ համատեքստի տարրեր (ուսալիաներ՝ իրակություններ, հատուկ անուններ կամ տեղանուններ):

Ուղղաձիգ համատեքստը՝ որպես բանասիրական խնդիր, մանրամասնորեն դիտարկված է Ի. Վ. Գյուրբենետի աշխատություններում: Բանասիրական և սոցիալ-տնտեսական ուղղաձիգ համատեքստին նվիրված շատ աշխատություններում խնդիր է դրված պատասխանելու մի շարք հարցերի, մասնավորապես ինչպես ու է ուղղաձիգ համատեքստը ներկայացված այս կամ այն գրական ստեղծագործության մեջ, որո՞նք են ուղղաձիգ համատեքստի արտահայտման հիմնական միջոցները, որո՞նք են խոսրի արտահայտման անդրադարձ հնարների հիմնական աղյուրները, և ինչպես ս կարելի է որոշել գրական անդրադարձի առկայությունը տեքստի այս կամ այն հատվածում:

Թվարկված հարցերից առաջինի բարդությունն այն է, որ գոյություն ունեն անդրադարձ հնարներ արտահայտող տարրեր եզրեր, ինչպիսիք են, օրինակ, գրական անդրադարձները, մեջբերումները և իրակությունները: Այս առումով Ի. Գյուրբենետն առաջարկում է հետևյալ տարբերակումը՝ բանասիրական համատեքստը ներկայացվում է այլակերպված դարձվածքներով,

մեջքերումներով և գրական անդրադարձներով, իսկ սոցիալ-պատմական ուղղաձիգ համատեքստը հատուկ անունների և տեղանունների միջոցով:

Մեկ այլ ռուս լեզվաբան՝ Լ. Բոլդիիրևան, տարանջատում է սոցիալ-պատմական ուղղաձիգ համատեքստ, ինչն, ըստ նրա, «գրական ստեղծագործությունում տեղ գտած պատմաբանախրական տեղեկության մասն է և ընթերցողին տպական է արտաքին աշխարհի, իրականության որոշակի հատվածի պատկերը իր՝ ամբողջ էությամբ», և դարաշրջանի սոցիալ-պատմական հիմնապատկերը այն հատկանիշների ամբողջությունը, որը բնութագրում է մարդկանց որպես կոնկրետ պատմական ժամանակահատվածի կոնկրետ սոցիալական խնդիր ներկայացնեցների կյանքի կարևորագույն կողմերը /Յոլգիրան, 1991: 207/:

Դարձվածքների՝ որպես ուղղաձիգ համատեքտի կարևորագույն տարրերից մեկի, ինչպես նաև բանավոր և գրավոր խոսքում դրանց գործառության մասին մանրամասնորեն խոսվում է Լ. Չիշենովայի աշխատության մեջ, որտեղ նշվում է, որ դարձվածքների գործառության առանձնահատկություններն ու դրանց կիրառման հաճախականությունը պայմանավորված են ոչ միայն լեզվական, այլ նաև արտակեզվական գործուներով: Չիշենովան մատնանշում է դարձվածքների՝ այլակերպման ենթարկվելու ունակությունը՝ կախված դրանց կառուցվածքից, և շեշտում է, որ դարձվածքների մի ամբողջ շարքի այլակերպումը կարող է դիտարկվել ոչ թե որպես անհատական հեղինակային, մոտեցում, այլ որպես դարձվածքներին բնորոշ գործառական հատկանիշ՝ դրանց խոսքային վարքագծի նորմ /Կիչենովա, 1986: 101/:

Ինչ վերաբերում է մեջքերումներին, Գյուրբենետն իր գրքերում օգտագործում է Ն. Կատինինեի դասակարգումը, որը դիտարկում է ամբողջական, հատվող և այլակերպված մեջքերումները /տե՛ս Կատինի, 1983/: Անդրադարձ տարրերի և արտահայտչամիջոցների նմանատիպ դասակարգում է՝ առաջարկում նաև Ի. Խրիստենկոն, ըստ որի, օբյեկտով պայմանավորված տարրերակում են նախատեքստի և նախախրականության գրական անդրադարձներ: Իսկ կառուցվածքի դիտակյունից ենթելով լեզվաբանն առանձնացնում է բովանդակային՝ տեքստում ցայտուն կերպով ներկայացված, և ոճական՝ անուղղակի անդրադարձներ դեպի աղբյուրը /Христенко, 1993/:

Հարկ է նշել, որ հաճախ դժվար է հստակ եզրագիծ անցելացնել գրական անդրադարձների և մեջքերումների միջև, ուստի որոշ գիտնականներ չեն տարանջատում գրական անդրադարձները և մեջքերումները որպես առանձին հասկացություններ. նրանք պարզապես առաջարկում են հիերարխիա՝ դրանցից մեկը ընդունելով որպես առավել ընդհանուրացնող կարգ, իսկ մյուսը որպես վերջինիս տարատեսակ: Օրինակ՝ Ի. Գյուրբենետը գրական անդրադարձ է անվանում առավելագույնս այլակերպված մեջքերումը:

Գեղարվեստական ստեղծագործության մեջ ուղղաձիգ համատեքստ ներդնելու տարրեր միջոցներ գոյություն ունեն: Ի. Գյուրբենետն, օրինակ, առանձնացնում է հետևյալները՝ 1. հեղինակն ինքն է տալիս մանրամասն տեղեկություն աղբյուրի վերաբերյալ, 2. գեղարվեստական ստեղծագործու-

թյան հերոսներն են ընթերցողին տալիս այդ տեղեկությունը, 3. միտումնավոր կերպով ակնարկվում է սխալ աղբյուր երգիծական ազդեցության հասնելու նպատակով, 4. հայտնի մեջբերումները ներկայացվում են որպես անանուն մեջբերումներ կամ որպես ասացվածքներ կամ առածներ, 5. արվում է հեղինակային մեկնաբանություն, 6. մեջբերումն այլակերպվում է, ինչը հաճացեցնում է խոսվածքների և ոճերի ձուլմանը, 7. արվում է համեմատություն (փոխառու տեքստի որևէ տարր բաղդատվում է սկզբնաղբյուրից որևէ կոճկուես տարրի հետ, ինչն օգնում է ընթերցողին հնարավորինս ըմբռնել տեքստը, եթե, իհարկե, ընթերցողն ունի բավարար նախագիտելիք), 8. տեքստում ուղղաձիգ համատեքստը ներմուծվում է առանց որևէ գրաֆիկական նշանակության, ինչի արդյունքում հեղինակի խոսքը և մեջբերվող խոսքը ձուլվում են:

Հարկ է նշել, որ առավել դժվար է վեր հանել այն ուղղաձիգ համատեքստերը, որոնք ներկայակած են տեքստին՝ առանց որևէ մեկնաբանության կամ գրաֆիկական ցուցիչների: Այս պարագայում դժվար է ոչ միայն վեր հանել ուղղաձիգ համատեքստը, այլ նաև կռահել նախագիտելիքը, որա սկզբնաղբյուրը գրական անդրադարձներով չափազանց հարուստ տեքստի ճիշտ մեկնաբանման և պատշաճ հասկացման համար: Հեղինակի կողմից խոսքի անդրադարձ տարրերի չափից շատ կիրառումը կարող է լուրջ խոչընդոտ հանդիսանալ ընթերցողի համար գեղարվեստական ստեղծագործության ընկալման տեսանկյունից:

Գրական անդրադարձների և առհասարակ ուղղաձիգ համատեքստի արտահայտման միջոցների մասին խոսելիս անհրաժեշտ է նաև անդրադառնալ այն աղբյուրներին, որոնց հաճախ դիմում են անվանի հեղինակները: Այս առումով Գյուքբենետն առանձնացնում է խոսքի անդրադարձ հնարների հետևյալ հիմնական աղբյուրները՝ Շեքսպիր, Աստվածաշունչ, անգլիական դասականների արձակն ու պոեզիան, համաշխարհային գրականություն, անտիկ դիցարանություն և գրականություն, պատմական գրականություն, պատմական դեմքների կողմից և մասին արված արտահայտություններ, մանկական բանաստեղծություններ, ասացվածքներ և առածներ:

Ուղղաձիգ համատեքստի ուսումնասիրմանը նվիրված աշխատություններում նաև փորձ է արվում պատասխանելու այն հարցին, թե ինչ նպատակով են կիրառվում խոսքի անդրադարձ հնարները: Այս առումով մեծ ավանդ ունի լեզվաբան Մ. Պրոխորովան, ով լեզվաբանական ուսումնասիրության մեջ համեմատականներ է անցկացնում երկու աղբյուր և թիրախային, տեքստերի միջև: Արդյունքում նա առաջարկում է. 1. գտնել անդրադարձ հնարները երկու տեքստերում էլ, 2. իմաստարանության մակարդակում մեկնաբանել երկու տեքստերում առկա անդրադարձ հնարները, 3. մեկնաբանել ուղղաձիգ համատեքստը փոխառու տեքստում լեզվաբանաստղեծական դիտանկյունից /Պրոխորովա, 1989: 182/:

Հարկ է նաև նշել, որ արևմտյան գիտնականների աշխատություններում և հոդվածներում բուն «ուղղաձիգ համատեքստ» տերմինը քիչ է կիրառվում, փոխարենը գործածվում են համանման հասկացություններ: Ուղղաձիգ

համատեքստի և հորիզոնական համատեքստի նախատիպերը Քլ. Սխաարի կողմից առաջարկված ենթահամատեքստն (infracontext) է և մակերեսային համատեքստը (surface context) /Schaar, 1978: 377-387/:

Չորջ Հենրի Վալլիսը դեռևս 1960-ականներին ուշադրություն էր դարձնում մեջբերումների և գրական անդրադարձների միջև եզրագծի բափանցիկությանը: Չնշելով «նախագիտելիքի» մասին՝ նա խոսում է «զրավոր ժառանգության» և «լեզվի մեջ ներթափանցող իիշելի արտահայտությունների» մասին /Vallins, 1960: 59/: Հենց Վալլինսին է պատկանում այն փոխաբերությունը, որը լեզվաբանները կիրառում են ուղղաձիգ համատեքստը բնորոշելիս. հեղինակը ընկալվում է որպես այն խաչքարի կամ գլուխկոտրուկի հեղինակ, որը պետք է ընթերցողը լուծի (But in fact all allusion, which travels far beyond the limits of classical mythology and ranges the whole world, is bound in the nature of things to leave the reader parting a little away. The writer, like settler of a quiz or a crossword puzzle, has the advantage) /Vallins, 1960: 27/:

Վալլինսի փոխաբերությունը շեշտադրում է այն հանգամանքը, որ արդյունավետ ընթերցանությունը պայմանավորված է ընթերցողի հենքային գիտելիքի և գեղարվեստական ստեղծագործության հեղինակի կողմից առաջ քաշված փաստերի համակցմանը: Հարող Բլումի պնդմանը գեղարվեստական ստեղծագործության պատշաճ ընթերցումը սկզբունքորեն անհնար է, քանի որ տեքստն ինքնին այլ տեքստերի մեկնաբանությունն է, իսկ տեքստի ընթերցումը՝ տեքստի մեկնաբանության մեկնաբանությունն է: Հետևաբար տեքստը մեկնաբանելու փորձը առավել բարդ առաջարկանք է մեկնաբանությունների այդ շղթայում /Bloom, 1975: 3/:

Այն, ինչի մասին խոսում է Բլումը, անմիջականորեն կապված է միջտեքստայնություն հասկացության հետ, ինչն, ի տարբերություն ուղղաձիգ համատեքստի, լայն կիրառում ունի ոռուսական և արևմտյան գիտնականների աշխատություններում: Միջտեքստայնություն ասելով՝ նկատի է առնվում տեքստի՝ «մեջբերման խճանկարի» տեսքով հանդես գալու հատկությունը: Յուրաքանչյուր տեքստ ընկալվում է որպես «մեկ այլ տեքստի յուրացում և փոխակերպում» /Կրիստեա, 2004: 167/:

Այս առումով արևմտյան գիտնականների եզրահանգումներն ու դիտարկումները հիմնականում համընկնում են ոռուսական լեզվաբանների կողմից արված դատողությունների և եզրահանգումների հետ, որոնք առնչվում են ուղղաձիգ համատեքստի ուսումնասիրությանը: Հիմնական տարբերությունն այն է, որ «ուղղաձիգ համատեքստ» հասկացությունը բացակայում է ոռուսական/սովետական բանասիրության եզրագծից այն կողմ:

Գ. Գիրունյանը նշում է. «Ի տարբերություն միջտեքստայնության խորագիրի ներքո հրատարակվող աշխատանքների խայտարդես բազմազանության՝ ուղղաձիգ համատեքստի խնդրով զբաղվող հետազոտողները պահպանում են վերլուծությունների ընդհանուր տրամաբանությունը, որում, ինչպես երևում է ուղղության անվանումից, գերակա հասկացությունը ուղղաձիգ համատեքստն է, որի նկարագրմանն են ուղղված մյուս բոլոր հասկացությունները» /Գրականության ակադեմիա, 2010: 10/:

յունները: Այս իմաստով օժանդակ դեր ունի նույնիսկ հորիզոնական համատեքստը և ծառայում է ուղղաձիգի բացահայտմանը» / Գիրունյան, 2014: 72/:

Ուղղաձիգ համատեքստի պատմության առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ սույն բանասիրական խնդրի բուն առարկան գրեթե մշտապես եղել է գեղարվեստական գրականությունը / Իզոտովա, 1992: 124/: Իսկ անգիտական մշակույթի, մասսավորապես՝ գրականության մեջ ուղղաձիգ համատեքստն իր դրսնորման ամենացայտուն ձևերով գրական անդրադարձներով և մեջքերումներով հանդերձ, մշտապես աննկարագրելի դեր է ունեցել: Եվ պատահական չել այն փաստը, որ ոչ մի եվրոպական լեզվում գոյություն չունեն գրական անդրադարձների և մեջքերումների այդ չափ տարատեսակ բառարաններ, որքան անգիտենում: 19-րդ դարի ողջ ընթացքում Անգլիայում մեջքերումների և հղումների, գրական անդրադարձների հանդեպ միտումը առանձնացնում էր ոչ միայն գրողներին, այլ նաև շարժային անգիտացիներին, ինչի մասին են վկայում գեղարվեստավավերագրական գրականության տեսակ հուշագրությունը, օրագրերը, նամակները և այլն / Գյոճենետ, 2010: 6/:

Հողվածն ու ուղղաձիգ համատեքստի վերաբերյալ ուումնասիրություններ կատարած լեզվաբանների փորձն ամփոփելով՝ կարող ենք եզրակացնել, որ «ուղղաձիգ համատեքստ» եզրույթի գոյության մի քանի տասնամյակներում լեզվաբանության մեջ մանրամասնորեն ուսումնասիրվել է բանասիրական ուղղաձիգ համատեքստ հասկացության կառուցվածքը և առանձնացվել են վերջինիս հիմնարար բաղադրիչները (այլակերպված դարձվածքներ, մեջքերումներ, գրական անդրադարձներ), ինչպես նաև ուղղաձիգ համատեքստի հիմնական աղբյուրները, առաջարկվել և մեկնաբանվել են խոսքապահայտչական հնարների բացահայտման և քայլ առ քայլ դիտարկման մեթոդները, ուսումնասիրվել են գեղարվեստական գրականության մեծ թվով տեքստեր ուղղաձիգ համատեքստի գործառնության տեսանկյունից:

Եվ, թեպետ, արևմտյան լեզվաբանական դպրոցում բուն ուղղաձիգ համատեքստ տերմինը քիչ է կիրառվում, մշտապես ուշադրության կետրունում է «միջտեքստայնություն» հասկացությունը: Իսկ, ինչպես նկատելի է հոդվածում, արևմտյան լեզվաբանների դիտարկումները քննարկվածի շուրջ հիմնականում համադրելի են ուսու լեզվաբանների կարծիքների հետ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գիրունյան Գ. Գրական անդրադարձի մեկնողական ընդգրկումը, Երևան, Հեղինակային հրատարակություն, 2014:
2. Ахманова О. С., Гюобенет И. В. «Вертикальный контекст» как филологическая проблема // Вопросы языкоznания, 1997, № 3.
3. Болдырева Л. В. Социально-исторический вертикальный контекст и проблема понимания литературно-художественного текста: дис. канд. фил. наук. М., 1991.

4. Гюббенет И. В. К проблеме понимания литературно-художественного текста (на английском материале). М.: МГУ, 1991.
5. Гюббенет И. В. Основы филологической интерпретации литературно-художественного текста. М.: МГУ, 1991.
6. Изотова А. А. Деформация английских фразеологических единиц в функциональном освещении: дис. канд. фил. наук. М., 1992.
7. Катинине Н. Ф. Глобальный вертикальный контекст романов Т. Гарди: дис. канд. фил. наук. М., 1983.
8. Кристева Ю. Избранные труды: Разрушение поэтики / Пер. с франц. – М.: РОССПЭН, 2004.
9. Прохорова М. Ю. Филологический вертикальный контекст в прагмалингвистическом освещении: дис. канд. фил. наук. М., 1989.
10. Христенко И. С. Лингвостилистические особенности аллюзии как средства создания подтекста: дис. канд. фил. наук. М., 1993.
11. Чиченова Л. А. Английская фразеология в языке и речи. М.: МГУ, 1986.
12. Bloom H. A Map of Misreading. NY: Oxford University Press, 1975.
13. Schaar C. Linear Sequence, Spatial Structure, Complex Sign and Vertical Context System // Poetics 7. North-Holland Publishing Company, 1978.
14. Vallins G. H. The Best English. London: Andre Deutsch, 1960.

Т. МОВСИСЯН – *Вертикальный контекст как объект лингвистического анализа.* – В статье рассматривается история лингвистической проблемы «вертикальный контекст», опираясь на работы лингвистов разных поколений и лингвистических школ. В работе представлены разные классификации аллюзивных фигур речи, а также основные источники цитирования. В ней также делается попытка сопоставить выводы и терминологию представителей русской и армянской лингвистических школ с выводами ученых аналогичных западных школ.

Ключевые слова: вертикальный контекст, горизонтальный контекст, аллюзия, цитата, фигура речи

T. MOVSISYAN – *Vertical Context as a Subject of Linguistic Study.* – The paper presents the history of the linguistic problem of “vertical context”, based on the relevant works of a number of linguists belonging to different generations and linguistic schools. Various classifications of allusive figures of speech, as well as the principal sources of quotations are introduced. An attempt is made to compare the relevant conclusions and terminology of the representatives of the Russian and Armenian linguistic schools with those of the scholars of western linguistic ones.

Key words: vertical context, horizontal context, allusion, quote, figure of speech